

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի

Որոշում N 1/463Ա

07/06/2013

**«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԹՈՂԱՐԿԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԹԻՎ 1/1223Լ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասը և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ փաստաթղթին հավանություն տալու մասին» թիվ 20Ա որոշման 1-ին կետը, 2.1, 3.1, 4.1 ենթակետերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության թողարկած պարտատոմսերի ընթացիկ գինը հաշվարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունվարի 22-ի թիվ 20 Ա որոշմամբ հաստատված ««Ռեպո/հակադարձ ռեպո համակարգի» կանոններ»-ի Հավելված 5.1-ի 5-րդ և 6-րդ կետերին համապատասխան:
2. «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության թողարկած պարտատոմսերի ընթացիկ գների հաշվարկման նպատակով թողարկման պահին թողարկման մինչև մարում եկամտաբերության սփրեդը պետական կորի համապատասխան ժամկետայնության՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունվարի 22-ի թիվ 20 Ա որոշմամբ հաստատված ««Ռեպո/հակադարձ ռեպո համակարգի» կանոններ»-ի Հավելված 5.1-ի 22-րդ կետում նկարագրված մեթոդով ինտերպոլացված տոկոսադրույքի նկատմամբ սահմանել 0.25 տոկոսային կետ:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 1/1223Լ որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 9-ից:

Արթուր Զավադյան